ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 հունիսի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

93
(2759)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆԸ ՈՐՈՇՈՒՄ ՈՒՆԻ

Դերասան, Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը օրերս վերադարձել է Հայաստան եւ Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցելու որոշման հանգել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Մարությանը երկար մտորումներից հետո վերջնական որոշում է կայացրել ավագանու առաջիկա ընտրություններին մասնակցելու վերաբերյալ: Մեր աղբյուրները տեղեկացրին, որ Մարությանը, մերժումներ ստանալով ՀԱԿ-ի, ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճյանի կողմից, որոշել է դիմել «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության նախագահ Դավիթ Սանասարյանին: Վերջինս համաձայնել է, եւ սեպտեմբերի 17-ին Երեւանի նախկին քաղաքապետը կրկին կփորձի իր ուժերը Երեւանի ավագանու ընտրություններին: Տեղեկացանք նաեւ, որ Մարությանն առաջիկայում կհանդիպի թիմակիցների հետ ու կհայտնի իր այս որոշման մասին: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ Մարությանը դժվար է վերջնական որոշում կայացրել. սկզբում մտերիմներին ասել է, որ իրեն դերասանի մասնագիտությունն ավելի հարազատ է, չի ցանկանում վերադառնալ քաղաքապետարան, բայց մտափոխվել է: «Ժողովուրդ» օրաթերթը երեկ փորձեց տեղեկությունը ճշտել հենց Հայկ Մարությանից, բայց նրան գրված մեր նամակները եւ արված հեռախոսազանգերը դեռ անպատասխան են:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ՀՀ պաշտպանության նախկին փոխնախարար Ալիկ Միրզաբեկյանը երեկ ներկայացել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան: Նրան՝ որպես վկայի, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի դեմ հարուցված քրեական գործով ծանուցում էին ուղարկել մի քանի անգամ դատարան ներկայանալու համար, սակայն նա առողջական խնդիրների պատճառով հրաժարվել էր ներկայանալուց: Եւ, ահա, երեկ վերջապես ներկայացել է դատարան, հայտնել, որ առողջական խնդիրներ ունի, ուստի դարձյալ չի կարող ներկայանալ դատարան: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի եւ ՊՆ նախկին պաշտոնյաների քրեական գործով դատարան են կանչվել Սեյրան Օհանյանը եւ ՊՆ որոշ աշխատակիցներ: Սեյրան Օհանյանը ներկայացել է եւ հարցաքննվել, ՊՆ աշխատակիցների հարցաքննությունը շարունակվում է: Հավելենք, որ Ալիկ Միրզաբեկյանը 2016 թվականին, Սերժ Սարգսյանի հրամանով, ազատվել էր ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի պաշտոնից: Ըստ լուրերի՝ Միրզաբեկյանը սպառազինության եւ սննդամթերքի մատակարարման գնումները շուկայականից բարձր գներով էր իրականացրել:

«Ժողովուրդ» օրաթերթը անդրադարձել էր Գյումրու նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանի ավագ որդու՝ գործարար Միսակ Բալասանյանի՝ Իրաքի դեսպան նշանակվելու եւ Գյումրիում իշխանությունն ամբողջովին ՔՊ-ին տալու մասին լուրերին: Մեզ հաջողվեց կապ հաստատել գործարար Միսակ Բալասանյանի օգնական Ռաֆֆի Ասլանյանի հետ, որը մեզ փոխանցեց, թե դեսպանի կամ այլ պաշտոնի նշանակվելու մասին տարատեսակ լուրեր եւ ասեկոսեներ վերջին 10 տարիներին պարբերաբար հրապարակվում են, որոնց Մ. Բալասանյանը միշտ նույն պատասխանն է տալիս՝ պատրաստ է իր ունեցած հնարավորությունների շրջանակներում ծառայել իր երկրին, օգտակար լինել իր ժողովրդին, իսկ կոնկրետ Իրաքի դեսպան նշանակվելու մասով առայժմ մեկնաբանություն չունեն: Գյումրիում իշխանությունն ամբողջովին ՔՊ-ին զիջելու մասին մեր հարցին ի պատասխան՝ մեր զրուցակիցը փոխանցեց, որ իշխանությունն առաջին հերթին պատասխանատվություն է, եւ գյումրեցիների քվեն սակարկման, փոխանակման ենթակա չէ:

Հետաքրքիր զուգադիպությամբ Հայաստանում պաշտոնի նշանակված անձինք բնակարանի եւ ավտոմեքենայի տեր են դառնում պաշտոնավարման ընթացքում: Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը եւս պաշտոնավարման տարիներին բնակարան է ձեռք բերել: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ վերջին երեք տարում մեկ բնակարան եւ մեկ մեքենա է գնել Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի թիվ մեկ վերահսկող պաշտոնյան: Մասնավորապես, 2022 թվականի հայտարարագրի համաձայն՝ Հովհաննես Մարտիրոսյանը Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նորակառույցում 2021 թվականին տուն է գնել: Դրանից մեկ տարի առաջ՝ 2020-ին, 2006 թվականի արտադրության «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենա է գնել: Չնայած սրան՝ նա տարվա վերջում բանկային հաշիվներին ունեցել է ընդամենը 309 հազար դրամ, իսկ կանխիկ դրամ ընդհանրապես չի հայտարարագրել: Տեղեկացնենք, որ Մարտիրոսյանի եկամուտը մեկ տարվա ընթացքում կազմել 16 մլն դրամից ավել գումար, որը գոյացել է նրա աշխատավարձից ու ոստիկանությունից ստացված կենսաթոշակից: Հավելենք, որ տեսչական մարմնի ղեկավարն այդ պաշտոնին նշանակվել է 2021 թվականի ապրիլին, որից առաջ տարբեր պաշտոններ է զբաղեցրել ՀՀ ոստիկանության համակարգում: Հիմա համակարգում է մի ոլորտ՝ հանքարդյունաբերություն, որի հետ մասնագիտական որեւէ առնչություն չունի:

ԶՐՈՒՅՑ

ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԸ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒՄ Է

Երեկ Նիկոլ Փաշինյանը գնացել էր 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով, որտեղ նա պատասխանել է հանձնաժողովի անդամների հարցերին: Նիկոլ Փաշինյանի հայտարարությունների վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Հայաստան» խմբակցության պատգամավոր Սեյրան Օհանյանի հետ:

-Պարոն Օհանյան, Նիկոլ Փաշինյանը քննիչ հանձնաժողովում պատասխանում է հարցերին եւ ասում, որ մինչեւ վերջին պահը ԳԾ պետը զեկուցել է, որ մեր բանակը պատրաստ է իր առջեւ դրված խնդիրը կատարել, եւ որ ինքը տրամադրել է այն, ինչ իրենից ուզել են: Նաեւ զեկուցել են իրեն, որ պատերազմի հավանականությունը 30% է: Այս մասին ի՞նչ կասեք:

-Սկսեմ վերջից. նախ՝ պատերազմի հավանականության վերաբերյալ կարող եմ ասել հետեւյալը. դա իրենց գնահատականը պետք է լիներ, բայց 2020 թվականի մայիսի սկզբից մինչեւ հուլիսը ես էլ տարբեր առաջարկներ եմ ներկայացրել ՀՀ ՊՆ, ԱՀ ՊԲ եւ ԱՀ ղեկավարությանը պաշտպանության եւ պատերազմին նախապատրաստվելու ուղղությամբ եւ ջանքերը ավելի գործնական դարձնելու եւ ավելի հետեւողական լինելու համար: Այսինքն՝ պատերազմի հավանականությունը միշտ էլ եղել է եւ այսօր էլ կա: Մենք ամեն ինչին պետք է պատրաստ լինենք:

Այն, որ բանակը պատրաստ է եղել մարտնչելու, միանշանակ է, եւ տարիների գործադրած ջանքերը բերել են նրան, որ, նախ, բանակը իր առջեւ դրված խնդիրը առաջին գծում իրականացրել է: Բանակն ապահովել է իր կայուն զարգացումը, եւ դա երեւացել է մարտական հերթապահության ժամանակ, երբ սահմանում մերոնք խնդիր են կատարել: Դա երեւացել է զորավարժությունների, զորահանդեսների ժամանակ: Իսկ ինքը, որ ասում է՝ ամեն ինչ արել է, նախ՝ առաջինը՝ կարծում եմ, որ ոչինչ չի արել ամենակարեւոր խնդրի ուղղությամբ: Նա պետք է խորությամբ տիրապետեր իրավիճակին, ընկղմվեր խնդիրների մեջ, որոնք ուղղված են ռազմաքաղաքական իրավիճակի գնահատմանը եւ նաեւ պետությունը ռազմաքաղաքական ռելսերի վրա դնելու ուղղությամբ՝ աջակցելով բանակին: Իսկ ինքը ամենակրեւորը չի իրականացրել. ինքը չի լուծել մոբիլիզացիոն խնդիրներ:

Զորահավաքի հիմնական նպատակը պատերազմին զուգահեռ բանակին թիկունք կանգնելն է եւ մոբիլիզացիայով անընդհատ համալրելն է: Խոսքը վերաբերում է նաեւ սանիտարական կորուստներին, իսկ սանիտարական կորուստները երկու ուղղությամբ են լինում՝ վերադարձվող եւ ոչ վերադարձվող: Վերադարձվող սանիտարական կորուստները տարբեր աստիճանի վիրավորներն են, հիմնականում՝ թեթեւ, իսկ ոչ վերադարձվողները ծանր վիրավորներն են ու զոհերը: Ինքը ոչինչ չի արել բանակը համալրելու, մոբիլիզացնելու համար: 44 օրվա ընթացքում իրենք կարողացել են միայն իրականացնել 1 օրվա մոբիլիզացիան:

Տարիներով ձեւավորված մոբիլիզացիոն համակարգը իրենք փոխել են կամավորական ջոկատներով բանակի համալրման, իսկ կամավորական ջոկատները չունեն այդ պատրաստակամությունը:

Ի՞նչ է նշանակում համալրում եւ զորահամալրումը: Այսինքն՝ երբ բանակի հիմնական կազմը կա, օրինակ՝ եթե դասակում կա 6 հոգի, եւս 10-ը պետք է համալրվեն: Այդ 10 հոգին շատ արագ կարող են կանգնել մնացածի թիկունքին, ներդաշնակվել նրանց հետ եւ կազմել կուռ ստորաբաժանում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը հունիսի 27-ին հանդիպել է Գերմանիայի Բունդեսթագի պատգամավոր Մերլե Շպերլերբերգի գլխավորած պատվիրակության հետ:

Հանձնաժողովի նախագահը հյուրերին ներկայացրել է Արցախում ստեղծված իրավիճակը, կարեւորել արցախահայերի անվտանգության ապահովման ու ինքնորոշման իրավունքի ճանաչման հրամայականը, հայտնել, որ Հայաստանը եւս ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության պահպանման խնդիր ունի:

Մերլե Շպերլերբերգը հատկապես հետաքրքրվել է, թե որքանով են մեր երկրում պաշտպանված կանանց, մարգինալ խմբերի, փոքրամասնությունների, բնապահպանության ոլորտում մարդու իրավունքները:

Թագուհի Թովմասյանը պատասխանել է, որ կանայք թիրախավորված են Հայաստանում: Թեեւ օրենսդրությունը նախատեսում է պաշտպանել բոլորի իրավունքները, բայց ոչ միշտ են մարգինալ խմբերն իրենց իրավունքների խախտումների մասին հայտնում իրավապահներին:

Պատգամավորն անդրադարձել է նաեւ բաց հանքերի շահագործման խնդրին՝ նշելով, որ արտանետումները վնասակար ազդեցություն են ունենում քաղաքացիների առողջության վրա:

Մերլե Շպերլերբերգն անդրադարձել է նաեւ Ստամբուլյան կոնվենցիային ու հետաքրքրվել, թե ինչու ՀՀ ԱԺ-ն մինչ օրս այն չի վավերացրել:

Այս կապակցությամբ հանձնաժողովի նախագահը տեղեկացրել է, որ Հայ առաքելական սուրբ եկեղեցին դեմ է արտահայտվել կոնվենցիայի ներածական մասին՝ անհնար դարձնելով դրա վավերացումը, քանի որ Հայաստանն առաջինն է ընդունել քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն, եւ եկեղեցու հետ հակադրվելը հանրության կողմից չի կարող ընկալվել:

Հանդիպմանը բարձր է գնահատվել Ազգային ժողովի համագործակցությունը Գերմանիայի Բունդեսթագի հետ:

«ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՑ»՝ ԲՈՒՆԿԵՐՈՒՄ



«Երբ պատերազմը սկսվել է, կինս ինձ ասել է, որ ես չեմ կարող Երեւանում պարապ մնալ»,- ԱԺ քննիչ հանձնաժողովի նիստում հայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ անդրադառնալով սոցցանցերում տարածված տեսանյութերին, որ պատերազմի ժամանակ բունկերում գտնվել են մարդիկ, որոնք այնտեղ գտնվելու իրավունք չունեն, մասնավորապես՝ իր կին Աննա Հակոբյանը: Փաշինյանի ներկայացմամբ՝ Աննան Հակոբյանն իրեն ասել է, որ կգնա եւ հնարավորության դեպքում մարդկանց օգնություն ցույց կտա: «Այդ օրերին ահագին մարդիկ՝ կանայք, լքել էին Ստեփանակերտը: Իմ կնոջ՝ այնտեղ գտնվելու սիմվոլիկ իմաստն այն է եղել, որ նաեւ մենք այնտեղ մեր ներկայությունն ապահովենք»,- պատմեց Փաշինյանը՝ նշելով, որ այդ ընթացքում Աննա Հակոբյանը շփվել է նաեւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարության հետ: Այդ ժամանակ էլ գաղափար է հնչել, որ Աննա Հակոբյանը գնա բունկեր, որ հրամկազմը տեսնի, որ Հայաստանի վարչապետի կինը Ստեփանակերտում է: «Եղել են մարդիկ, ովքեր կարծել են, որ դա դրական ներգործություն կունենա, եւ որոշվել է «քաղաքավարական այց» անել հրամկազմին. այդ քաղաքավարական այց է եղել, գնացել է, բարեւել է, ոգեւորել է, 10-15 րոպե մնացել է եւ դուրս եկել»,- նշեց նա:

ՆՈՐ ԳՐՔՈՐԾ՝ ՎՐԱԵՐԹԻ ԳՈՐԾՈՎ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեն նոր քրեական գործ է հարուցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ավտոշարասյան կողմից վրաերթի ենթարկված եւ մահացած հղի կնոջ՝ Սոնա Մնացականյանի գործով:

Քրեական վարույթով Սոնայի հորը՝ Մնացական Մնացականյանին, ճանաչել են տուժող: Վարույթը նախաձեռնվել է մայիսի 18-ին: Այսինքն՝ բացի վարորդի վերաբերյալ այս պահին դատարանում քննվող վարույթից, արդեն իսկ նախաձեռնված է նոր քրեական վարույթ շարասյան ղեկավար կազմի մեղավորության հարցի քննարկման նպատակով:

Եվ, ահա, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ այս քրեական գործով իրավապահների տեսադաշտում է Պետական պահպանության ծառայության պետ Սարգիս Հովհաննիսյանի տեղակալ Գրիգոր Առաքելյանը, ինչից հետո իրավապահ համակարգը նոր քրեական գործ հարուցեց:

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՍՈԹՔԻ ՀԱՆՔՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը պարբերաբար ահազանգեր է ստանում Գեղարքունիքի մարզի Սոթք հանքավայրի աշխատակիցներից: Վերջիններս մեզ հետ զրույցում պատմեցին, որ արդեն երեք ամիս է՝հանքի բաց աշխատանքները դադարեցվել են, իսկ փակ հանքը շարունակում է իր գործունեությունը:

Տեղի բնակիչների խոսքով՝ մոտ 300-ից 350 աշխատակից արդեն ստացել է աշխատանքից ազատման հրամանները: Մեր զրուցակիցները նշում են, որ մնացել են առանց աշխատանքի, իսկ հունիս ամսից վերջնական դադարեցվել է աշխատավարձերի փոխանցումները:

«Անելանելի վիճակում ենք, բաց հանքի աշխատողները հանքի աշխատակիցների մեծամասնությունն են կազմում, իսկ փակ հանքում աշխատողների քանակը շատ քիչ է, եւ եթե Կառավարությունը քայլեր չձեռնարկի, ստիպված պետք է արտագաղթենք մեր հայրենի գյուղերից, մեր օջախներից: Ոչ մեկ մեզ համար պատասխանատվություն չի կրում. այսինքն վե՞րջ, թուրքն հասավ իր նպատակին...»,-զայրացած նշեցին մեր զրուցակիցները:

Նշենք, որ Սոթքի հանքավայրի աշխատակիցների մեծամասնությունը սահմանային Կախակն, Սոթք, Կութ, Ակունք եւ մի շարք այլ գյուղերի բնակիչներ են:

Հիշեցնենք, որ արդեն տեւական ժամանակ է, ինչ թշնամին թիրախավորել է Սոթքի հանքը. երբ փորձում են վերսկսել աշխատանքները, կրակ է բացում հանքի աշխատակիցների եւ տեխնիկայի ուղղությամբ:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՍԻՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

Անահիտ Ավանեսյանն ընդունել է Հայաստանում Սիրիայի Արաբական Հանրապետության նորանշանակ դեսպան Նորա Արիսյանին:

Շնորհավորելով վերջինիս՝նախարարը նշել է, որ երկու ժողովուրդների միջեւ առկա են ավանդական, բարեկամական հարաբերություններ, սակայն առողջապահության ոլորտում համագործակցությունը ամրապնդելու կարիք կա: Դեսպանը նշել է, որ Սիրիայի՝տասը տարուց ավելի տեւած պատերազմից առավելապես տուժել է առողջապահության ոլորտը. կան բազմաթիվ խնդիրներ. «Թեեւ վերջին տարիներին փորձեր են արվում վերականգնելու Սիրիայի առողջապահական համակարգի բնականոն աշխատանքը, Հայաստանում առաջապահության ոլորտը բավականին արագ զարգանում է, ուստի ձեր փորձն ու բարեկամական օժանդակությունը Սիրիայի համար կարեւոր են»:

Կոնկրետ ուղղություններով համագործակցությունը զարգացնելու համար նախարարն առաջարկել է մշակել նախագիծ եւ ակտիվացնել համագործակցությունը. «Հայաստանը սիրով ընդունել է Սիրիայից ուսանողների, որոնք նաեւ կամուրջ են երկկողմ հարաբերությունների ամրանդման համար, ուստի պատրաստ ենք շարունակելու աջակցությունը մեր երկրում նրանց բժշկական կրթությունը կազմակերպելու հարցում»,-նշել է Անահիտ Ավանեսյանը:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԳՐԻԳՈՐԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը 2022 թվականի հաշվետու տարվա հայտարարագիր ներկայացրել է սույն թվականի մայիսի 16-ին, իսկ նախարարի պաշտոնը ստանձնել է 2022 թվականի դեկտեմբերի 26-ին, ինչպես նշված է հայտարարագրում:

Մինասյանը տարեսկզբին հայտարարագրել է 14 անշարժ գույք, որից 9-ը՝բնակարան, որից մեկը՝ Հունաստանում, մեկը՝ Բուլղարիայում, 3 ավտոտնակ եւ 1 ավտոկայանատեղի, 1 հասարակական նշանակություն ունեցող շինություն: Տարվա ընթացքում օտարվել է Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի բնակարանը, եւ նոր բնակարան է ձեռք բերել Երեւանում:

Մինասյանը հայտարարագրել է մեկ մարդատար մեքենա՝ Toyota մակնիշի, 2013 թվականի արտադրության: Մինասյանը գնել է բաժնեմաս Եվա Առաքելյանից, ով ԲԴԽ խորհրդի նախագահի կինն է: Կարելի է նկատել, որ Մինասյանը մինչ պաշտոնը զբաղեցնելն էլ եղել է բավականին ապահովված: Նրա հայտարարագրած թանկարժեք գույքն ընդհանուր առմամբ կազմում է 65 հազար դոլար եւ 15 մլն դրամ: Հավելենք նաեւ, որ ամբողջը նվիրատվություն է՝ երեք արվեստի գործ եւ երկու ժամացույց:

Նախարարի կանխիկ դրամական միջոցները տարեվերջին կազմել են 20 հազար դոլար, 2 հազար եվրո, 10 մլն դրամ: Մինասյանի տարեկան եկամուտները կազմել են 161 մլն 651 հազար դրամ: Ամենամեծ եկամուտը նախարարը ստացել է Միքայել Բեգլարի Մինասյանից 109 մլն 478 հազար դրամ: Նա ստացել է նաեւ աշխատանքի վարձատրություն ՀՀ արդարադատության նախարարությունից՝ 13 մլն 476 հազար դրամ, եւ «էյ էմ» իրավաբանական ընկերությունից՝ 173 հազար դրամ, եւ նույն կազմակերպությունից ստացել է վարձակալության դիմաց գումար եւ շահաբաժին՝ 23 մլն 575 հազար դրամ:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 665 հազար դրամ: Հանգստի համար կատարած ճանապարհածախսի եւ կեցության գումարը կազմել է 3 մլն 700 հազար դրամ, իսկ անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերը կազմել են 9 մլն 500 հազար դրամ: Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առեւտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնել է Նարինե Սարգսյանին մինչեւ 2024 թվականին:

Գրիգոր Մինասյանը հայտարարագրել է նաեւ միանվագ ծախսեր, որոնք կազմում են 46 մլն 800 հազար դրամ: Նա նաեւ հանդիսանում է «Փրոֆ Թաքս» ՍՊԸ 100% բաժնետեր եւ ««էյ էմ» իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ում՝ 60%: «Փրոֆ Թաքս» ՍՊԸ-ի տնօրեն Մարիա Ստեփանյանը Գրիգոր Մինասյանի կինն է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԳ ԽՈՄՆԱԿԸ ⇨ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է

ՀՀ ԱԳ նախարարության խոսնակ Անի Բաղալյանը թվիթերյան գրառմամբ անդրադարձել է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի գրառմանը՝ խոշտանգումների զոհերի աջակցության միջազգային օրվա կապակցությամբ: Մանասյանը դատապարտել է Ադրբեջանի քաղաքականությունն այնտեղ պահվող հայ գերիների եւ քաղաքացիական անձանց նկատմամբ:

«Հատուկ ուշադրություն պետք է դարձնել Ադրբեջանի քաղաքականությանը այդ հանրապետությունում պահվող հայ ռազմագերիների եւ քաղաքացիական անձանց նկատմամբ խոշտանգումների եւ անմարդկային վերաբերմունքի վերաբերյալ»,- գրել է Մանասյանը:

Ի հավելումն այդ գրառման՝ ՀՀ ԱԳՆ խոսնակը նշել է. «Իրավապաշտպան կազմակերպությունները նաեւ կոչ են արել անհապաղ ազատ արձակել բոլոր ռազմագերիներին»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՌԴ–ՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

ՌԴ ԱԳ փոխնախարար Միխայիլ Գալուզինն ընդունել է ՌԴ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Վաղարշակ Հարությունյանին. այս մասին հայտնում են ՌԴ ԱԳՆ մամուլի ծառայությունից: Տեղի է ունեցել մտքերի փոխանակում՝ երկկողմ օրակարգի արդիական թեմաների, Լաչինի միջանցքում եւ ընդհանուր առմամբ Լեռնային Ղարաբաղում իրավիճակի զարգացման շուրջ:

Ընդգծվել է հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ ՀՀ, ՌԴ եւ Ադրբեջանի ղեկավարների՝ 2020-2022 թթ. ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունների անկասելի պահպանման կարեւորությունը:

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՂՄԸ՝ ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամերիկյան կողմը մի շարք հարցեր ունի, որոնք կցանկանար քննարկել: «Քննարկումները, որոնք կանցկացվեն այստեղ, շատ նուրբ դիվանագիտական են»,- ասել է խոսնակը՝ անդրադառնալով Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Արարատ Միրզոյանի եւ Ջեյհուն Բայրամով բանակցություններին:

Նա ընդգծել է, որ բանակցությունները տեւելու են մինչեւ հունիսի 29-ը: «Պետքարտուղար Բլինքենը կհանդիպի Ադրբեջանի եւ Հայաստանի արտաքին գործերի նախարարների հետ: Մենք նախկինի պես հավատում ենք, որ խաղաղությունը հնարավոր է, եւ որ ուղիղ երկխոսությունը մնացած հարցերի լուծման եւ ամուր ու արժանապատիվ խաղաղության հասնելու բանալին է»,- ասել է Մեթյու Միլլերը:

ՀԵՏԱԽՈՒՔՈՒՄ

ՆԱԽԿԻՆ ԹԱՂԱՊԵՏԸ ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է

ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Արաբկիրի բաժնի կողմից հետախուզում է հայտարարվել Երևանի բնակիչ, Արաբկիրի նախկին թաղապետ 55-ամյա Հովհաննես Շահինյանի նկատմամբ: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վերջինիս նկատմամբ հետախուզում է հայտարարվել՝ ՀՀ ՔրՕրի 296 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի (փողերի լվացում առանձնապես խոշոր չափերով, որը պատժվում է ազատազրկմամբ 6-12 տարի ժամկետով) հատկանիշներով: Հ. Շահինյանը չի ընդունում մեղադրանքը եւ հայտարարում է, որ իր նկատմամբ կատարվում է քաղաքական հետապնդում:

Հոդված 296. Փողերի լվացումը

1. Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որեւէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ պահելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) խոշոր չափերով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) առանձնապես խոշոր չափերով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

4. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը), իսկ առանձնապես խոշոր չափ՝ 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը):

5. Սույն հոդվածի իմաստով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույք է համարվում սույն օրենսգրքի 121-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված գույքը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվել է կամ առաջացել սույն օրենսգրքով նախատեսված հանցագործությունների կատարման արդյունքում:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ԵՐԵՔ ԱՆՁԻ

ՀՀ ֆինչական կոմիտեի Երեւան քաղաքի ֆինչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ֆինչական բաժնում իրականացված ֆինությամբ զբաղվել են մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելու եւ ոստիկանների օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու դեպքի մի շարք հանգամանքներ:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ 2023 թվականի հունիսի 6-ին՝ ժամը 00:45-ի սահմաններում, ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության երկու պարեկ Ավան վարչական շրջանում ծառայություն իրականացնելիս ստուգման նպատակով կանգնեցրել են «Սուզուկի» մակնիշի ավտոմեքենան: Մոտենալով վարորդին՝ Երեւանի 46-ամյա բնակչուհուն պարեկներից մեկը խնդրել է ներկայացնել ավտոմեքենայի տեխնիկական անձնագիրը եւ վարորդական իրավունքի վկայականը, որին ի պատասխան՝ կինը հայտնել է, որ ունի վարորդական իրավունքի վկայական, սակայն իր մոտ չէ, եւ խնդրել է սպասել, մինչեւ կմոտեցնեն: Մինչ այդ հիշյալ կինը թույլ չի տվել, որպեսզի պարեկները նույնականացում կատարեն, ինչպես նաեւ հրաժարվել է տրամադրել անձնագիրը՝ հայտնելով կեղծ տվյալներ, որոնք մուտքագրելիս որեւէ տվյալ չի հայտնաբերվել: Բազմաթիվ պնդումներից հետո, երբ կինը թույլ է տվել նույնականացնել դեմքով, պարզվել է, որ վարորդական իրավունքի վկայական չունի: Պարզվել է նաեւ, որ նշված ավտոմեքենան երթեւեկել է ոչ իրական հաշվառման համարանիշներով, չի եղել գործող ԱՊՊԱ պայմանագիր, տեխնիկական զննությունը ժամկետանց է եղել կամ բացակայել է:

Պարեկային ծառայության աշխատակիցները ցանկացել են կազմել արձանագրություններ, որի ժամանակ նրանց են մոտեցել մի շարք քաղաքացիներ՝ շուրջ 8 տղամարդ, որոնք գտնվել են ոչ սթափ վիճակում, հնչեցրել հայհոյանքներ եւ վիրավորական արտահայտություններ: Նշված քաղաքացիներից մի քանիսը մոտեցել եւ փորձել են խոչընդոտել պարեկների օրինական գործողություններին. թույլ չեն տվել կազմել արձանագրություններ: Այդ ընթացքում մոտեցել են օժանդակ ուժեր եւ հիշյալ 4 տղամարդկանց վարչական ձերբակալման ժամանակ 46-ամյա կինը դուրս է եկել ավտոմեքենայի սրահից, հայհոյել, երկու ձեռքով հարվածներ հասցրել պարեկի դեմքի շրջանում՝ պատճառելով ֆիզիկական ցավ եւ մարմնական վնասվածք: Բացի այդ, անհետացել է նաեւ հիշյալ պարեկին կցված տեսախցիկը:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ 46-ամյա կնոջը մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասով եւ 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Մեղադրանքներ են ներկայացվել նաեւ հիշյալ տղամարդկանցից երկուսին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: 46-ամյա կնոջ եւ տղամարդկանցից մեկի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը, իսկ մյուս տղամարդու նկատմամբ կիրառվել է գրավը:

Նախաքննությունը շարունակվում է:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԿԱՐԵՎՈՐ

ՎԹԱՐՆԵՐԻ ԹՎԻ ԱՃ

Ցուցանիշ	ՃՏՊ-ում տեղի ունեցած ՃՏՊ-ներ			Մինչև 18 տարեկանների մասնակցությամբ ՃՏՊ-ները		
	ՃՏՊ	զոհ	վիրավոր	ՃՏՊ	զոհ	վիրավոր
2020	4016	348	5446	530	19	653
2021	4604	368	6699	635	21	765
2022	4608	321	6153	662	31	804
31.05.2023թ դրությամբ	1652	114	2299	280	6	341

Վերջին շրջանում պարբերաբար տեղի են ունենում ճանապարհատրանսպորտային պատահարներ, որոնք, ցավոք, հաճախ ավարտվում են մահվան ելքով:

Վերջին տարիների վիճակագրությունը փաստում է, որ ավելացել է թե՛ ընդհանուր ՃՏՊ-ների, թե՛ զոհերի ու վիրավորների թիվը: Մասնավորապես, աճել է անչափահասների մասնակցությամբ պատահարները:

Այսպիսով, 2020 թվականի 4016 պատահարի համեմատ՝ 2022 թվականին տեղի է ունեցել 4608 պատահար:

2022-ին տեղի ունեցած վթարներից 662-ը տեղի են ունեցել մինչեւ 18 տարին լրացած անձանց մասնակցությամբ, որոնց արդյունքում զոհվել է 31, վիրավորվել՝ 804 անչափահաս: Միեւնույն ժամանակ, 2020-ին տեղի ունեցած պատահարներից 530-ն է եղել անչափահասների մասնակցությամբ, որոնց արդյունքում զոհվել է 19, վիրավորվել՝ 653 անձ, որոնց 18 տարին լրացած չի եղել:

2023 թվականի առաջին հնգամսյակում՝ մինչեւ մայիսի 31-ը, տեղի է ունեցել 1652 ՃՏՊ, որից 280-ը՝ անչափահասների մասնակցությամբ: Արդյունքում 6 անչափահաս զոհվել է, 341-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Այս տարի տեղի ունեցած ՃՏՊ-ների արդյունքում զոհվել է 114, վիրավորվել՝ 2299 անձ:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ԴՐԱՄԱՀԱՎԱՔ՝ ՄԱՆԿԱԲՈՒՅԺՆԵՐԻՑ

Ամալյա Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, աշխատելով «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում որպես ստացիոնար ծառայության կադրերի տեսուչ, նույն ընկերության տնօրենից հանձնարարություն է ստացել կազմակերպել հաստատության բուժաշխատողների մասնագիտական կատարելագործման դասընթացներին մասնակցությունը, որը եղել է վճարովի հիմունքներով:

Վերջիններիս հետ անձնական փոխհարաբերություններով ու վստահությամբ պայմանավորված՝ հիշյալ վճարներն իր միջոցով փոխանցելու նպատակով 2020 թվականի հուլիսի 8-ից օգոստոսի 24-ն ընկած ժամանակահատվածում մանկաբույժներից հավաքել է 60.000-ական, իսկ բուժքույրերից՝ 50.000-ական ՀՀ դրամ, այնուհետեւ իրեն փաստացի ազատ կամքով վստահված խոշոր չափերով 2.340.000 ՀՀ դրամը չի փոխանցել «Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ եւ հափշտակել է, ինչի պատճառով կատարելագործման դասընացները տեղի չեն ունեցել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 26-ից 27-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 53 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐ

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը հունիսի 26-ին Ազգային ժողովում հայտարարել է, որ 12 տարի առաջ ուսուցիչների համար օրենքով սահմանվել է պահանջ, որպեսզի վերջիններն ունենան պարտադիր բարձրագույն կրթություն, ու նրանց տրվել է ժամանակ՝ այն ձեռք բերելու համար: Հանրակրթության համակարգում դեռեւս կան 1300-ից ավելի ուսուցիչներ, որոնք միջին մասնագիտական կրթություն ունեն. նրանք, օգոստոսի 20-ից սկսած, այլեւս չեն կարողանալու աշխատել դպրոցներում: Նախարարն ասել է, որ այդ ուսուցիչներին իրենք հնարավորություն են ընձեռել մասնակցել կամավոր ատեստավորման գործընթացին. եթե հավաքեն 60 տոկոս եւ ավելի միավոր, կտրվի հնարավորություն՝ գործունեությունը շարունակելու: Եթե բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչներին օգոստոսի 20-ից ազատեն աշխատանքից, Տավուշի մարզի դպրոցներում գոյություն ունեցող ուսուցիչների պակասն ավելի է սրվելու: Տավուշի մարզպետարանից ստացված տվյալներով՝ Տավուշի մարզի հանրակրթական 76 դպրոցներում ընդհանուր առմամբ աշխատում են 1830 ուսուցիչ եւ ուսուցչի օգնական: Նրանցից 1722-ն ունի բարձրագույն մանկավարժական կրթություն, 173-ը՝ բարձրագույն ոչ մանկավարժական կրթություն, 113-ը՝ միջին մասնագիտական կրթություն: Մարզի հանրակրթական դպրոցներում առկա է ուսուցչի 27 թափուր հաստիք՝ տարբեր առարկաների գծով: Տավուշի մարզի 76 հանրակրթական դպրոցների 113 ուսուցիչ աշխատանքից ազատելու դեպքում ո՞վ է փոխարինելու այդ ուսուցիչներին, ո՞վ է մեկնելու մարզի հեռավոր, սահմանամերձ գյուղեր, ցածր աշխատավարձով ուսուցչությամբ զբաղվելու: Մանկավարժական բուհերի, համալսարանների տավուշցի շրջանավարտների մեծամասնությունը ուսումնառությունից հետո Տավուշ չի վերադառնում, գերադասում է ոչ մանկավարժական աշխատանք գտնել Երեւանում՝ մայրաքաղաքի հետ կապելով իր ճակատագիրը: Տավուշի մարզի դպրոցներում քիչ են տղամարդ ուսուցիչները, միջին մասնագիտական կրթությամբ ուսուցիչների մի մասը տղամարդիկ են, նոր ուսումնական տարվա նախաշեմին նրանց աշխատանքից ազատելու դեպքում մարզի հանրակրթական դպրոցներում ավելի է նվազելու տղամարդ մանկավարժների թիվը: Նախարար Ժաննա Անդրեասյանն ասել է, որ բարձրագույն կրթություն չունեցող մանկավարժները 12 տարի ժամանակ են ունեցել բարձրագույն կրթություն ձեռք բերելու համար: Մինչդեռ ուսուցչի ցածր աշխատավարձով յոլա գնացող, հեռավոր, սահմանամերձ Տավուշի մարզի բնակիչ մանկավարժների մեծամասնությունը, կքած ընտանեկան հոգսերի տակ, բավարար ֆինանսներ եւ ժամանակ չեն ունեցել թեկուզ հեռակա կարգով բարձրագույն կրթություն ստանալու:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ

1

Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 12.12.2001թ. թիվ 468 հրամանով տարեկան համաձայնեցված ժամանակով միջանկյալ հաշվետվության ներկայացման համար

Հավելված 1 ՀՀ կառավարության 28.11.1998թ. N 740 որոշման սահմանված նորմատիվային ակտերի վրա

ՁԵՎ N 1

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

առ "31" դեկտեմբերի 2022թ.
(նախորդող ամիս տարի)

		ծածկագիրը
Կազմակերպության անվանումը	ՈՈՒԲԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԲՈՎՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ	
Փաստացի գործունեության		
Իրավական երկու տեսակները		
Պետական ռեգիստրում գրանցման համարը		22212000782
Հարկ վճարողի հաշվառման համարը		03522199
Չափի միավորը		Մեկ հազար ՀՀ դրամ
Գտնվելու վայրը	ք.Աբովյան Հատիսի փողոց 6 հեռախոս	/0222/ 2-50-80
Փաստացի գործունեության իրականացման վայրը	հեռախոս	

2

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	658,306	578,908
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	020		
Ոչ նյութական ակտիվներ	030		
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	040		
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	050		
Հետաձգված հարկային ակտիվներ	060		
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	070		
	071		
	072		
	073		
	074		
	075		
	076		
	077		
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	658,306	578,908
II. Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր	090	55,740	46,017
Աճեցվող և բուժվող կենդանիներ	100		
Արտադրանք	110	700	534
Անավարտ արտադրություն	120		
Արտադրանք	130		
Ապրանքներ	140		
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	1,007	4,564
Դեբիտորական պարտքերը վաճառքների գծով	160	80,333	51,156
Կարճաժամկետ դեբիտորական պարտքերը բյուջեի գծով	170	7,585	1,553
Այլ դեբիտորական պարտքեր	180	14,906	9,820
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	190		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	200	112,223	112,410
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210		
	211		
	212		
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	272,493	226,054
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	930,799	804,962

3

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2		
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի գումար	240	134,210	134,210
Էմիսիոն եկամուտ	250	-86	-86
Վերագնահատումից և վերադասակարգումից տարբերություններ	260		
Կուտակված շահույթ	270	196,802	171,755
Պահուստային կապիտալ	280		
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝	290	0	
	291		
Ընդամենը սեփական կապիտալ	300	330,926	305,879
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	310		
Հետաձգված հարկային պարտավորություններ	320		
Վարձակալներին վերաբերող շնորհներ	330	363,144	302,493
Ոչ ընթացիկ պահուստներ	340		
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	350	145,950	145,950
	351		
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	509,094	448,443
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր	370		
Կարճաժամկետ փոխառություններ	380		
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	29,148	19,746
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400		
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	22,327	17,801
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	420		30
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցների և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	430	11,175	
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (իրենց բաժնետերերին)	440		
Այլ կրեդիտորական պարտքեր	450		
Եկամուտներին վերաբերող շնորհներ	460	28,129	13,063
Ընթացիկ պահուստներ	470		
Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	480		
	481		
	482		
	483		
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	90,779	50,640
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	930,799	804,962

4

Ղեկավար Վ.Մանուկյան
անուն ազգանուն
Գլխավոր հաշվապահ Հ.Խաչատրյան
անուն ազգանուն

5

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (նախորդող ժամանակաշրջան/ առորդական)	Հաշվետու տարի (հիմնական ժամանակաշրջան/ ընթացիկ)	Նախորդ տարվա միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու տարվա միջանկյալ ժամանակաշրջան
1	2	3	4	5	6
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	1,275,725,189	1,174,707,531	1,275,725,189	1,174,707,531
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	-306,422,963	-295,447,022	-306,422,963	-295,447,022
Համախառն շահույթ (վնաս)	030	969,302,226	879,260,509	969,302,226	879,260,509
Իրացման ծախսեր	040	-694,760,398	-487,209,544	-694,760,398	-487,209,544
Վարչական ծախսեր	050	-389,414,591	-536,837,504	-389,414,591	-536,837,504
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	-114,872,763	-144,786,540	-114,872,763	-144,786,540
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	070	224,708,197	199,129,791	224,708,197	199,129,791
	071				
	072				
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080	-48,383,464	-44,260,827	-48,383,464	-44,260,827
	081				
	082				
Գործառնական շահույթ (վնաս)	090	61,451,970	10,082,425	61,451,970	10,082,425
Ֆինանսական ծախսեր	100				
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	110				
Շնորհվող գործառնությանը վերաբերվող ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից	120				
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130	-472,442		-472,442	
	131				
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	60,979,528	10,082,425	60,979,528	10,082,425
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	150				
Զուտ շահույթ (վնաս) եկամտահարկի գծով ծախսի նվազեցումից	160	60,979,528	10,082,425	60,979,528	10,082,425
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170	-5,400,000	-6,936,048	-5,400,000	-6,936,048
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	55,579,528	3,146,377	55,579,528	3,146,377
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)*	190				
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)*	200				

* Սույն հոդվածները բաժանվում է այն բաժնետիրական ընկերությունների կողմից, որոնց տպագրական բաժնետոմսերը կամ արտոնագիր տպագրանքի բաժնետոմսերը հրապարակային տեղադրման են ենթակա: Լրացվում են արտաքին ոչ (կանոնակարգող) շրջանցում տպագրական բաժնետոմսերը կամ արտոնագիրը հրապարակային տեղադրող բաժնետոմսեր թողարկող կազմակերպությունները: Սույն հոդվածների տակ գրված է տպագիր դրամներով (դ թվ հազար դրամներով):

Ղեկավար Վ.Մանուկյան
անուն ազգանուն
Գլխավոր հաշվապահ Հ.Խաչատրյան
անուն ազգանուն

6

Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 12.12.2001թ. թիվ 468 հրամանով տարեկան համաձայնեցված ժամանակով միջանկյալ հաշվետվության ներկայացման համար

Հավելված 1 ՀՀ կառավարության 28.11.1998թ. N 740 որոշման սահմանված նորմատիվային ակտերի վրա

ՁԵՎ N 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

առ 01/01/2022 - 31/12/2022
(նախորդող ամիս տարի)

		ծածկագիրը
Կազմակերպության անվանումը	ՈՈՒԲԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԲՈՎՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ	
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները		
Պետական ռեգիստրում գրանցման համարը		22212000782
Հարկ վճարողի հաշվառման համարը		03522199
Չափի միավորը		Մեկ հազար ՀՀ դրամ
Գտնվելու վայրը	ք.Աբովյան Հատիսի փողոց 6 հեռախոս	/0222/ 2-50-80
Փաստացի գործունեության իրականացման վայրը	հեռախոս	

ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱ է ՁԵՌՔ ԲԵՐՎԵԼ

«Մեծ Սարգսյանը 2017-ի նոյեմբերին հարցազրույցում հայտարարել է, որ մենք պատրաստակամություն ենք հայտնել թողնել բոլոր 7 շրջանները, բայց Արդբեջանն ամեն անգամ նոր պահանջներ էր առաջ քաշում. այսինքն՝ ո՞րն է նոր պահանջը. դա այն է, որ պահանջում են Ղարաբաղը ներառյալ»,- 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող ԱԺ ընտիր հանձնաժողովի նիստում հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Եթե մենք 7 շրջանները եւ Ղարաբաղը տայինք, ես վստահ չեմ, որ դա մեզ շանս չէր տա պատերազմից խուսափելու»,-ասաց նա:

Անդրադառնալով բանակին՝ Փաշինյանն ասաց. «Բանակի հետ կապված, ըստ էության, հետեւյալն է արվել. արդյոք մարտունակության վիճակի մասին եղե՞լ են քննարկումներ: Այո՛, եղել են, եւ ես մինչեւ ներառյալ 2020-ի օգոստոսը ստացել եմ հավաստիացում, որ, իհարկե, շատ դժվար է լինելու, բանակը իր առջեւ դրված խնդիրը կատարելու է: Սա արձանագրում չէ, որ ուղղակի ի գիտություն է ընդունվել: 2018-ին ես որդեգրել եմ «ամեն ինչ բանակի համար» քաղաքականությունը: Արդեն 2019-ին էականորեն բարձրացել են բանակում աշխատավարձերը, իրականացվել են սպառազինության եւ ռազմական տեխնիկայի գնումներ: Շատ է խոսվում այն մասին, որ իմ՝ վարչապետ դառնալուց հետո սպառազինության եւ ռազմական տեխնիկայի ձեռք բերման պլանները փոխվել են, ձեւախեղվել են: Ոչ մի բան չի փոխվել, պարզապես լրացուցիչ այլ տեխնիկա է ձեռք բերվել: Բացառված է, որ որեւէ մեկը հիշի դեպք, որ բանակը կառավարության առջեւ դրել է խնդիր, եւ դա չի լուծվել այն պատճառով, որ փող չկա: Բայց շատ խնդիրների լուծում միայն փողի հետ չի կապված»: ՀՀ վարչապետը նաեւ հայտարարեց, որ իր վարչապետ դառնալուց հետո արտաքին քաղաքականության վեկտորի փոփոխության հարց չի քննարկվել: «Ընդհակառակը, մեր ընկալումը եղել է այն, որ նման փոփոխությունը կարող է ծանր հետեւանքներ ունենալ հենց ԼՂ հակամարտության համատեքստում»,-ասաց նա:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ՃՏՊ. 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՓԱԿՎԵՑ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՆՀԱՅՏ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Հունիսի 30-ը Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատանքի վերջին օրն է: Գերատեսչությունը հուլիսից կգործի Ներքին գործերի նախարարության կազմում:

Համաձայն 2022 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված ««Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի՝ ստեղծվել է Ներքին գործերի նախարարություն, որն իր մեջ ներառում է նաեւ Արտակարգ իրավիճակների նախարարության գործառույթները: Ստացվում է՝ ԱԻՆ նախարար Արմեն Փամբուխչյանը եւ ԱԻՆ շուրջ 280 աշխատակից շուտով կմնան առանց աշխատանքի:

«Ժողովուրդ» օրաթերթը ԱԻ նախարարությունից փորձեց հասկանալ՝ ինչ ճակատագիր է սպասվում աշխատակիցներին եւ ԱԻ նախարարության շենքին, որը գտնվում է Դավթաշեն վարչական շրջանում: Այսիսով, «Ժողովուրդ» օրաթերթին ԱԻ նախարարությունից հայտնեցին, որ շուրջ 280 աշխատակիցներ ցանկության դեպքում կարող են մրցույթի մասնակցել եւ համալրել ՆԳՆ շարքերը կամ էլ այլ ոլորտում շարունակեն իրենց հետագա գործունեությունը:

Այսինքն՝ ստացվում է, ԱԻՆ աշխատակիցների ճակատագիրը դեռ անորոշ է, իրենք պետք է փորձեն իրեն համար աշխատանք գտնել, նախարարությունն այդ հարցով չի զբաղվելու: Ինչպես հայտնի է, Արմեն Փամբուխչյանը ղեկավարելու է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական շտաբը Երեւանի ավագանու սպասվող ընտրություններում:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Արմեն Փամբուխչյանի համար աշխատանք գտնելը Նիկոլ Փաշինյանի համար առաջնային հարց է, բայց ինչ պաշտոն առաջարկում է Փամբուխչյանին, վերջինիս սրտով չի լինում: Ինչ վերաբերվում է ԱԻՆ շենքի ճակատագրին, մեզ հայտնեցին, որ այդ հարցը լինելու է կառավարության՝ հինգշաբթի օրվա նիստի օրակարգում: Կառավարության որոշմամբ՝ նախարարության շենքը, ողջ գույքը կտրամադրվի ՆԳՆ-ին, որն էլ արդեն կորոշի՝ շենքն ինչ նպատակով է օգտագործելու կամ ում է տրամադրելու:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Գ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են հետեւյալ լոտերը՝

- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Վ. Մամիկոնյան փողոց, 7 հասցեում գտնվող 163,7 ք.մ. բնակելի տուն, 3,4 ք.մ. /7,8 խ.մ./ պարիսպ եւ 0,053 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 13200000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Տափերական, Վասպուրականի փողոց, 1/1 հասցեում գտնվող 0,0268 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 2900000 ՀՀ դրամ:

Գույքերը հանդիսանում են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի գրավի առարկա եւ զբաղեցված են գրավատուների կողմից: ՀՀ քաղ. օր-ի 272-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գույքի իրացումից հետո նոր սեփականատիրոջ պահանջով գրավատուն պարտավոր է մեկ ամսում ազատել գույքը:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 14.07.2023թ.-ին եւ 17.07.2023թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ Գ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Գորկու փողոց, 53 հասցեում գտնվող 91,34 ք.մ. բնակելի տուն եւ 0,007744 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 15360023 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 14.07.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 14.08.2023թ.-ին:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆԱԽԱԳԻԾ

Ո՞Վ Է «ՏԻԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ» ՖԻԼՄԻ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը ամիսներ առաջ գրել էր, որ Հանրային հեռուստաընկերությունը նկարահանում է մի քանի մասից բաղկացած գեղարվեստական ֆիլմ «Տիկին նախարար» վերնագրով, որտեղ գլխավոր դերերում են դերասան Աբել Աբելյանը, որը մարմնավորում է վարչապետին, եւ դերասանուհի, ռեժիսոր Ֆրիդա Յորքը, որը մարմնավորում է պաշտպանության կին նախարարի կերպարը:

Իսկ ո՞վ է «Տիկին նախարար»-ի կերպարը մարմնավորող դերասանուհին: Ֆրիդա Յորքը հայ դերասանուհի է, որին հանրությունը ճանաչեց «Գարեգին Նժդեհ» ֆիլմից, որտեղ նա մարմնավորում էր Գոհարի կերպարը: Դերասանուհին նկարահանվում է ինչպես հայկական, այնպես էլ ռուսական արտադրության ֆիլմերում:

Նշենք, որ ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում դերասան Աբել Աբելյանը, անդրադառնալով իր դերին, ասել էր, որ յուրաքանչյուր դերասանի համար մեծ պատասխանատվություն է վարչապետի կերպարը մարմնավորելը:

«Նախագծին մասնակցելու առաջարկը ստացել եմ ընկերոջից եւ սիրով ընդունել եմ: Այս պահին միայն կարող եմ ասել, որ նախագծի նկարահանումներն ավարտվել են»,- նշեց նա՝ հավելելով, որ տեղյակ չէ, թե որ հեռուստաընկերությունն է նախագծի պատվիրատուն:

Հիշեցնենք, որ ֆիլմի սյուժեի հիմքում Պաշտպանության նախարարությունն է, որի միջոցով փորձում են առաջին պլան մղել կին զինվորականին եւ նրան դարձնել պաշտպանության նախարար, սակայն այդ ընթացքում հանդիպում են բազում խոչընդոտների: Հենց այս ամենի շուրջ էլ հյուսվում է ողջ ֆիլմի պատմությունը:

Ավելին՝ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Հանրային հեռուստաընկերությանը նման ֆիլմի նկարահանումը պատվիրել է ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆ

ՀԱՆԴԵՍ ԿԳԱՆ ՀԱՏՈՒԿ ՀԱՄԵՐԳՈՎ

Ֆրանսիացի մեծանուն կոմպոզիտոր Օլիվիե Մեսսիանի 115-ամյակի կապակցությամբ հայ անվանի երաժիշտները՝ դաշնակահար Հայկ Մելիքյանը եւ ջութակահար Անուշ Նիկողոսյանը, հանդես կգան կոմպոզիտորին նվիրված համերգով՝ կատարելով նրա խոհափիլիսոփայական երաժշտությունը:

Համերգային երեկոն, որն անցկացվում է Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության, Հայաստանի Ֆրանսիական ինստիտուտի հետ համագործակցությամբ, տեղի կունենա հուլիսի 6-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Համերգին բացման խոսքով հանդես կգա Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Անն Լույոն, իսկ երաժիշտները կկատարեն կոմպոզիտորի եւ նրան նվիրված մի շարք գլուխգործոցներ: Սա բացառիկ հնարավորություն է մասնագետների եւ երեւանյան երաժշտասեր հասարակության համար՝ ըմբոշխնելու ստեղծագործություններ, որոնք Հայաստանում հազվադեպ են հնչում:

«Համերգն ունի խորհրդանշական կարեւորություն՝ հաշվի առնելով հայ-ֆրանսիական բարեկամական հարաբերությունները եւ մեծ կոմպոզիտորի ստեղծագործությունների հանրահռչակման անհրաժեշտությունը մեր երկրում»,- նշում է համերգի կազմակերպիչ, պրոդյուսեր Ալեքսանդր Պլատո Հակոբյանը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀՖՖ-Ն ՏՈՒԳԱՆԵԼ Է

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական եւ էթիկայի կոմիտեն տուգանել է «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին, «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին, «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին, «ՖԱ Ուրարտու» մարզական ՀԿ-ին, «Արարատ ՖԱ» Հ/Ձ ՓԲԸ-ին, «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ին, «Նոա ՖԱ» ՀԿ-ին ՀՖՖ ակումբների արտոնագրման կանոնակարգի հոդված 19-ով սահմանված չափանիշներին չբավարարելու համար:

(Հոդված 19. Ֆուտզալի թիմը

19.01. Արտոնագրման թեկնածուն իր կազմում պետք է ունենա առնվազն մեկ ֆուտզալի թիմ, որը մասնակցում է ՀՖՖ կողմից կազմակերպված ազգային, շրջանային կամ տեղական մակարդակով կազմակերպած պաշտոնական մրցաշարի): Նշված ակումբները տուգանվել են մինչեւ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի (2,000,000 ՀՀ դրամ) չափով:

ՄԻԱԿԸ, ՈՎ ԿՀԱՂԹԻ

Լաս Վեգասում անցկացված խառը մենամարտերի UFC on ESPN 47 մրցաշարում հաղթանակ տարած Արման Ծառուկյանը (20-3) դարձյալ խոսել է թեթեւ քաշային կարգում UFC չեմպիոն Իսլամ Մախաչեւի (24-1) հետ հնարավոր ռեւանշի մասին:

«Դիվիզիոնում ես միակն եմ, ով կարող է հաղթել Իսլամ Մախաչեւին: Ցանկանում եմ մենամարտել նրա հետ: Դա երազանքի մենամարտ է: Այդ պատճառով էլ իմ հարցազրույցներում միշտ հիշատակում եմ նրան:

Ես կենտրոնացած եմ չեմպիոն դառնալու վրա: Այո, կլինի կարիերայիս ամենաբարդ մենամարտը, բայց ես կարող եմ չեզոքացնել Իսլամի ըմբշամարտը եւ կանգնած դիրքում հաղթել: Ես վստահ եմ, որ ավելի լավ եմ բռնցքամարտում եւ հարվածում ոտքերով: Ես գիտեմ՝ ինչպես հաղթել նրան»,- ասել է Արման Ծառուկյանը LowKick MMA յութուբյան ալիքի եթերում: Լաս Վեգասում Արման Ծառուկյանը երրորդ ռաունդում տեխնիկական նոկաուտով պարտության էր մատնել բրազիլացի Ժոակին Սիլվային (12-4):

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑ

Երեւանի «Արարատ» ակումբի եւ վերջինիս գլխավոր մարզիչ Գագիկ Սիմոնյանի միջեւ պայմանագրի ժամկետը երկարաձգվել է: Գագիկ Սիմոնյանի գլխավորությամբ «Արարատ»-ն անցկացրել է 2022/23 մրցաշրջանի վերջին 12 հանդիպումները՝ գրանցելով չորս հաղթանակ, չորս ոչ-ոքի եւ չորս պարտություն: 51-ամյա Գագիկ Սիմոնյանը որպես ֆուտբոլիստ խաղացել է «Վան»-ում, «Արարատ»-ում, «Բանանց»-ում եւ «Ուլիս»-ում, ինչպես նաեւ Լիբանանի առաջնության ՀՄՄ եւ «Թադամոն Սուր» ակումբներում: Գագիկ Սիմոնյանը նաեւ մեկ հանդիպում է անցկացրել Հայաստանի Ազգային հավաքականում: Որպես մարզիչ աշխատել է նաեւ Երեւանի «Ուլիս»-ում: Գագիկ Սիմոնյանի մարզչական շտաբում կշարունակեն աշխատել Գեւորգ Պողոսյանը, Ռաֆայել Սաֆարյանը եւ Արա Աբրահամյանը:

● *Հունիսի 30-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Սե լա վի» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-5000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ԱՊԱՍՏԱՐԱՆ

ՀԱՐՑ. Որոշ ժամանակ առաջ շատ էինք լսում ապաստարանների եւ թաքստոցների մասին. խնդրում եմ բացատրել դրանց տարբերությունը:

Ռաֆայել Հազեյան (36 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստարանները քաղաքացիական պաշտպանական հատուկ կառույցեր են, որոնք նախատեսված են հակառակորդի զինատեսակների (այդ թվում՝ միջուկային) բոլոր խոցող գործոններից պաշտպանելու համար: Ապաստարանները կառուցվում են ռազմավարական նշանակություն ունեցող կազմակերպությունների տարածքներում՝ անձնակազմը պատսպարելու համար:

Ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս բնակչության պատսպարումը կազմակերպվում է պարզագույն թաքստոցներում՝ նկուղային եւ կիսանկուղային հարկերում, հանքախորշերում, ստորգետնյա անցումներում եւ այլ խորացված տարածքներում (մետրոպոլիտենի կայարաններում), որտեղ կազմակերպվում են բնակչության կենսապահովման համար նվազագույն պայմաններ:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պարզագույն թաքստոցներն իրենց պաշտպանական հատկանիշներով նվազեցնում են զինատեսակների հարվածային ալիքի եւ բեկորների ներգործությունները:

ՍԱԿԱԳԻՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ սկզբունքով է որոշվում նախատեսվող արեւային կայաններում արտադրվող էլեկտրաէներգիայի սակագինը:

Բագրատ Միքայելյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համակարգային, այսինքն՝ մեծ, արեւային կայաններում արտադրված էլեկտրաէներգիայի սակագինը որոշվելու է միջազգային մրցույթի արդյունքում:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ներկա պահին կոնկրետ տեղանքների համար իրականացվում են նախագծման աշխատանքներ: Նախատեսվում է, որ այս տարվա նոյեմբերից նախագծված կայանները կդրվեն մրցույթի: Ամենացածր սակագինն առաջարկող ներդրողը կստանա կառուցման իրավունքը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմինը նախաձեռնել է 24-ժամյա նստացույց՝ՀՀ-ում ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի Հանրապետության դեսպանատների եւ ԵՄ ներկայացուցչության դիմաց:

Նստացույցի նպատակն է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներից եւ ԵՄ-ից պահանջել չբավարարվել լոկ հայտարարություններով, այլ գործուն քայլեր ձեռնարկել Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակումն անհապաղ վերացնելու ուղղությամբ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______
Ազգանուն՝ ______
Առաքման հասցե՝ ______
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ______

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+10 +15 +19 +23
Կոտայքի լեռներ	+10 +14 +20 +22
Կոտայքի նախալեռներ	+15 +18 +27 +30
Գեղարքունիք	+10 +14 +20 +24
Լոռի	+11 +16 +20 +25
Տավուշ	+16 +20 +23 +28
Արագածոտնի լեռներ	+9 +13 +18 +21
Արագածոտնի նախալեռներ	+15 +18 +26 +31
Արարատ	+18 +20 +32 +34
Արմավիր	+16 +20 +31 +33
Վայոց ձորի լեռներ	+10 +13 +23 +26
Վայոց ձորի նախալեռներ	+18 +21 +33 +35
Սյունիքի հովիտներ	+19 +24 +30 +35
Սյունիքի նախալեռներ	+13 +17 +24 +28
Արցախ	+18 +21 +28 +33
Երեւան	+18 +20 +31 +33

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.6.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*